ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՇՔԱՆՇԱՆ ՇՆՈՐՀԵՑ ԲԱՐԵՐԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Կիրակի, ապրիլ 7-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը ընդունեց «Ագրո-պլյուս» ֆիրմայի փոխնախագահ, բարերար Արթուր Մարտիրոսյանի: Վեհարանի իր աշխատասենյակում, մեծաթիվ հյուրերի ներկայությամբ, Վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատեց պրն. Արթուր Մարտիրոսյանի մատուցած ծառայությունները հայ ժողովրդին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ միևնույն ժամանակ հայտնելով, որ բարերարի նվիրած միջոցներով նորոգվել և այժմ գործում է Սամարղանդի Ս. Աստվածածին եկեղեցին:

Արտակ աբդ. Տիգրանյանն ընթերցեց Գարեգին Ա Կաթողիկոսի հայրապետական կոնդակը, որով բարերար Արթուր Մարտիրոսյանին շնորհվում է Հայ Եկեղեցու բարձրագույն՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի շքանշան: Հանձնելով այդ բարձրագույն պարգևը հայ ժողովրդի ազնիվ զավակին՝ Նորին Սրբությունն ասաց. «Այս շքանշանը մեր 1700-ամյա հավատքի կնիքն է: Ինչ որ Աստված քեզի տվավ՝ դուն գիտցար անկե բաժին հանել ազգիդ»:

Վեհափառն օրհնեց Մարտիրոսյան ընտանիքի անդամներին և մաղթեց, որ պրն. Մարտիրոսյանը շարունակի իր ազգանվեր և եկեղեցաշեն գործը: Վեհափառը հայտնեց, որ պրն. Արթուր Մարտիրոսյանը իր որդիական սերը հանդեպ Մայր Աթոռն ու իր Հայրապետը արտահայտել է առանձին նվիրատվությամբ, և նրա անունը պիտի փորագրվի Վեհարանի մուտքին՝ Մայր Աթոռի բարերարների ազնիվ անունների շարքում:

Ճաշանշանի հանձնման հանդիսավոր արարողությունից հետո պրն. Մարտիրոսյանն ասաց, որ իր համար մեծ պատիվ է Հայոց Հայրապետի բարձրագույն գնահատանքը և ինքը կաշխատի այսուհետ ևս օգտակար լինել ու ծառայել ազգին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ընդունելությանը ներկա էին ՀՀ փոխարտգործնախարար Վարդան Օսկանյանը, Կրոնի գործոց պետական խորհրդի նախագահ Լազար Սուշյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ, Սրբազան հայրեր, Մայր Աթոռի միաբաններ և մեծաթիվ հյուրեր: